



ՕՐԱԹԵՐԹ

20 փարայ

ԹԻԻ 240

ԵՐԵՎԱՆԻ

6 ՕԴՈՍՈՍ 1868

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ՕԴՈՍՈՍ

Գաղղիոյ կէս պաշտօնական Լիթան տառ լրագիրը «Գաղղիա և Հայք» վերնագրով հետեւեալ կարեւոր յօդուածը կը հրատարակէ .

« Փարսիցի դաշնադրութիւնը՝ պատերազմի դաշտին վրայ հանդիպած բոլոր քրիստոնեայ տէրութեանց Տաճկաստանի քրիստոնէից վրայ պաշտպանութեան իրաւունք տալով՝ անոնց մէջ բնաւ տարբերութիւն դրած չէ , և այս ալ իմաստութեամբ է , քանզի հարկ է անոնց ամենքն ալ սկզբունքով հաւատարմացնալ պաշտպանել՝ առանց անոնց սեփական կրօնքը որոշելու .

« Սակայն յայտնի է որ տէրութեանց երեսփոխաններուն մօտքին մէջ երկու քրիստոնէական դաւանութիւն միայն կային . Յունաց մեծ խումբ մը և քանի մը կաթողիկէ խումբեր , բողոքականք ուրիշ ժողովուրդ մէջ կորսուած են , և նոյն խի Կ. Պօլսոյ մէջ հազիւ քանի մը հազար հոգի կը հասնին . ուրիշ տեղեր գրեթէ բնաւ չկան . Իսկ հայերուն վրայ բնաւ մտածող չեղաւ , կամ մանաւանդ Երեւանը գտնոնք Յունաց հետ շփոթեց՝ ընդհանուր կոչմամբ գտնոնք « Երեւելեան ծէսէ » քրիստոնէայանականութիւն , որ իրաց խորը քննելու դժուարութեան հաղաթիւ ուղղին համար դիւրին անուն մ'է .

« Բայց սակայն Հայաստանեայց ծէսն այնչափ տարբեր է յունականէն , որչափ յունականը լատինականէն , և Ռուսիա երբեք չիրնար պնդել թէ այս կարեւոր խումբն իրեն կրօնակից է , Եւս կերպիւ Սուլթանին 3500 000էն աւելի հայ հպատակները Ռուսիոյ կրօնական և ցեղային ազդեցութեան ազատ կըլլան , ինչու որ հայոց ծագումը բնաւ չներեր գտնոնք ռուսաց ուղիղ կամ սխալ եղբարց կարգը դասելու :

« Հայերը մասնաւոր ցեղի մը կը վերաբերին . իրենց յատուկ կրօնք մը կը դաւանին , և այս երկու անջնջելի դժբաղդներուն շնորհիւ բոլորովին անխառն պահուած են շրջակայ ազգերէն :

« Յունական կամ Օրթոդոքս կրօնքին պէս՝ հայկականն ալ կաթողիկոսութեանն կառավարման պարզագէտ հերձուած մ'է , բայց ոչ երբեք հերետիկոսութիւն . այսինքն դաւանութեանց հիմք մի և նոյն է , և տարբերութիւնները միայն ձևերու մէջ են . բայց ձևերը բոլորովին տարբեր ծէսեր կազմելու չափ կարեւոր են . Այլ երջապէս Հռոմէն ալ բաժնուած են և Գալլի եկեղեցւոյ գերագոյն զլուխ չեն ճանչիր :

« Աթոքիկ և քանի մը բողոքական հայեր ալ կան , բայց խիստ սակաւաթիւ են ազգին մեծագոյն մասին նկատմամբ , որ իր ազգային եկեղեցւոյն շնորհիւ իր ազգայնութիւնը պահպանած է . Եւս ազգը Բ. Դռնէն ճանչուած է , և Սուլթանին աթոքիկ բոլորաբն համախմբեալ հասարակութեանց մէջ կը կը կազմէ . Թէպէտ 1856ի դաշնադրութիւններն ստորագրող տէրութիւնները հայերը յանուանէ յիշած չեն , սակայն անժխտելի է որ դորձած ուած ընդհանուր առմանց մէջ հասկցուած են . Ուրեմն յայտնի իրաւունք ունին պաշտպանութեան Բայց ո՞վ պիտի տայ զայն իրենց . Ո՞վ չա՞ն ունի մանաւանդ զերենք պաշտպանելու , Բան զի քաղաքականութեան՝ ինչպէս նաեւ ամեն բանի մէջ՝ դորձոց գլխաւոր շարժառիթը շահն է :

« Ենդղեա պիտի ըլլայ հայերը պաշտպան ուր . բայց ամեն մարդ գիտէ որ Երեւելից մէջ Ենդղեա բնաւ մէկը չպաշտպաներ . կրօնակից չունի , և իր միակ նպատակն է չէնքին նեցուկները բռնել , որպէս զի կործանումն ուշացնէ :

Եսկէց զատ՝ Գաղղիոյ ազդեցութեան արդեւք ըլլալը՝ Ռուսիոյ դէմ կենալու չափ կարեւոր կերբի իրեն :

« Բրուսիա պիտի ըլլայ . բայց այս տէրութիւնը դեռ անցեալ տարուինէ՛ ի վեր միայն իր աչքը դէպ ի Երեւելք դարձունել սկսած է , և տակուին ոչ պարագա՝ ոչ ալ ժամանակ ունի իր քաղաքականութիւնը պարզելու :

« Եւստրիա պիտի ըլլայ . հարկաւ ոչ . քանզի իւր ներքին վերակազմութեամբ բաւական զբաղած է , և իր ահա նորինքն իրեն մերձակայ դաւառներէն , Դանութեան իշխանութիւններէն , և Դանուբի եզերքը գտնուած Սլավազգերէն անդին չեն անցնիր :

« Ար մեան Գաղղիա և Ռուսիա :

« Ռուսիա յօժար է պաշտպանութիւն ընելու , մանաւանդ այն օրէն ի վեր՝ որ Գարսից յաղթելով Լիւմիաճնի աթոքը ձեռք անցուց , ուր կը նստի Հայաստանեայց եկեղեցւոյ գերագոյն գլուխն եղող կաթողիկոսը , Բայց Տաճկաստանի հայերը չեն ուզեր Ռուսիոյ պաշտպանութիւնը , մանաւանդ քանի որ Ռուսաստանի հայոց եղած խոստումներուն մէկն ալ չկատարուեցաւ... :

« Եւս տժգոհութեան հակառակ , հայերը դարձեալ պաշտպանութեան անհրաժեշտ պէտք մ'ունին , քանզի թէպէտ Բ. Դռնն իրենց վրայ խիստ բարեխնամ դիտաւորութիւններով լըցուած է , բայց այս դիտաւորութեանց արդիւնքը միշտ չտեսնուիր , մանաւանդ հեռաւոր գաւառաց մէջ . — Հետեալ պէս հայերը դէպ ի Գաղղիա կը դարձունեն աչքերնին և ազգու պաշտպանութիւն մ'անկէ կոպտան . Բայց բաւական չէ որ հայերը մեր պաշտպանութեան փափաքին . այլ պէտք է նաեւ որ ստանան , և Գաղղիա ալ շահ ունենայ զերենք պաշտպանելու . . . :

«Այդ, հասուն գատաղութիւնը ցոյց կուտայ թէ ո՛րչափ օգտակար է մեզ Արեւելքի մէջ մեր պաշտպանելոց թիւն աւելցնել: Արեւելք այս մասնաւոր յատկութիւնն ունի, որ մէկը ս՛րճափ զայն պաշտպանէ, ա՛յնչափ հզօր կըլլայ, և ա՛յնչափ աւելի կընայ պաշտպանել: Սուլթանին քրիստոնեայ հպատակաց տրուած պաշտպանութեան տարածութիւնը պաշտպանողին ալ զօրութիւնը կաւելցնէ: Ուստիոյ պաշտպանութեան զօրութիւնն անոր համար անսահման է, վասն զի անդադար կը պաշտպանէ և պաշտպանելիներ կը փնտռէ:»

Անգղիոյ կառավարութիւնը Պուլ-գարատանի և Արիսի գործերն ուշադրութեան առարկայ ըրած ըլլալով, մայրաքաղաքիս դեսպանին հրաման տրւած է որ յիշեալ խնդրոց վրայ մանրամասն տեղեկագիր մը պատրաստէ և Ուստիոյ արուած մեքենայութիւններն և Ք. Գրան կասկածներուն իրաւացի ըլլալն ստուգէ: Անորայի արքունիքն այս տեղեկագրին համեմատ պիտի որոշէ եղեր Ուստիոյ նկատմամբ բռնելիք քաղաքականութիւնը:

Ուստիոյ մէջ գործադրութեան ըսկած գատաստանական նոր կանոնաց համեմատ մայրաքաղաքիս Ուստիոյ հիւպատոսարանն ալ ատեն մը պիտի բացուի, որոյ գատաստանները պիտի հրատարակուին և փաստաբաններ պիտի դատախոսեն: Այս նոր ատենան առաջին (ստորին) ստորմանի պիտի ըլլայ, և արւած վճիռներն Օտէսայի և Քեղրքսպուրիի ատեններէն վերաքննել պիտի ըլլան:

Ալաթիոյ մէջ կը խօսուի թէ կայսերական կառավարութեան 170 միլիան դուրուշի փոխառութիւն մը կառաջարկուի, և Փարիզէն ալ սեղանաւորութեան մեծ տան մը գործակառարը մայրաքաղաքս հասեր է, որպէս զի յիշեալ կարեւոր գործն ի գլուխ հանէ:

(Շարունակութիւն տես Օրաթերթ թիւ 209)

Ասոնց ճշմարտութիւնն այսօրուան օրըս չատ յայտնի է, ընդունելի եւ յարգի ոչ մեր բարեկամ խմբագրին միայն, այլ եւ կը համարձակինք ըսել, ամենէն աղէտ հայուն, ըստ որում հայոց լուսաւորչական կոչուած մասին կրօնական կամ եկեղեցական համոզումներուն մէկ կական մասը կացուցանող սկզբունքն է թէ Հայաստանեայց եկեղեցին՝ կամ լուսաւորչական հայուն քրիստոնէութիւնը՝ իր մասնաւոր կամ ազգային ձեւին տակ արդէն ճշմարտաւ առաքելական եւ աւետարանական ըլլալով ուրիշ քրիստոնէական-եկեղեցական մասնաւոր ձեւ մը առնելու պէտք չունի, ուստի եւ ամեն հայ, առանց ուրիշ որ եւ իցէ ազգային եկեղեցական կամ ծիսական գրութիւն ատելու, այլ մանաւանդ անոր քրիստոնէական արժէքը ճանչ-

նալով, (քանզի հայր եկեղեցիովն՝ ուրիշ որ եւ իցէ մասնաւոր եկեղեցիէ եղող քրիստոնէայներն ամօշննելու հայր ներողամիտ է՝ բառին կրօնական նաեւ աւետարանական իմաստով)։ Հայաստանեայց եկեղեցւոյ որ եւ իցէ եկեղեցական օտար դրութեան մը գոյնը տալով՝ թէ ազգին մէջ եւ թէ ազգէն դուրս ջանացողները կը մերժէ։ Ուստի թող գիտնայ մեր բարեկամ խմբագիրը որ, ինչպէս բոլոր ազգը, նոյնպէս այն խաղերուն հայ ժողովուրդը, ուր այս տարի երկու կղերին մէջ անդ զլիաւորաբար անդի ունեցան վերոյիշեալ յայտարարութիւնները, նաեւ այն եկեղեցականք կամ եկեղեցականք՝ զոր մեր խմբագրին արդի Ունիթորաց պարագլուխ կը կարծէ, նոյն իսկ մեր խմբագրին ազգային եկեղեցական ինքնօրէնութեան նկատմամբ ցըցուցած նախանձաւորութենէն աւելի մաքուր նախանձաւորութիւն մը ունին, ըստ որում ասոնց նախանձաւորութիւնը չունի մոլեկրօնութեան այն խանձը՝ որուն հոտը տեղ անդ չերկբայելու չափ զգալի է մեր բարեկամին խորհրդածութեանը մէջ, մինչեւ փափաքել որ եկեղեցիներուն գոռներն իրարու դէմ մշտնջենապէս գոց ըլլան, ինչպէս որ ետքը պիտի տեսնենք։

Ուրեմն միարարութեան սկզբունքին վնասակարութիւնն ապացուցանելու համար այնչափ քրտնիլ հարկ չէր մեր բարեկամին։ Անոր ապացուցանելու միմիայն կէտը սա էր թէ՛ Զատկական այցելութեանց առթիւ տեղի ունեցած ցոյցերը՝ երկուսանք, յունաց եւ հայոց կողմէն միանգամայն, հայոց եկեղեցին յունականին մէջ ընկղմուել, կամ մեր խմբագրին բառովն ըսենք, անոր հետ միակերպութեամբ ունէին։ Մեր բարեկամին պատճառաբանութեան ճշմարտութիւնը կախում ունի այս կէտին ապացուցուելէն, այնպէս որ եթէ Զատկական այցելութեանց պատճառաւ տեղի ունեցող ցոյցերը կամ յայտարարութիւնները խմբագրին գաղափարին համեմատ միարարական կամ ունիթորական չեն, անոր պատճառաբանութեան բոլոր զօրութիւնը կը ցնդի եւ ապացուցական արժէքը կը կորսուի։ Այդ մեր բարեկամը կը գրուցէ միայն թէ այն ցոյցերը կամ յայտարարութիւնները ունիթորական են, եւ անոնց ամենեւին ապացոյց տալու (քանզի ապացոյց չկայ որ տայ) կուզէ որ իր վկայութեանը հաւատանք, իր հաստատութիւնը միայն բաւական ապացոյց համարինք։ Հիմա մենք ցուցնելու համար թէ մեր բարեկամը յիշեալ կէտն ամենեւին ապացուցած չէ նախ անոր իստքը յառաջ բերենք, եւ ապա ընենք մեր դիտողութիւնները։

«Քանի մը լրագրաց մէջ (այսպէս կսկսի յօդուածը) նամակներ եւ ճառեր կը կարդանք, յորս կը պարունակին հայ եւ յորս եկեղեցականաց ուսանց Զատկական տօնի առթիւ տեղի ունեցած անցքերը։ Այս ճառերուն մէջ կրկնուած կը տեսնենք ինդիր մի, որ երկար գարեհէն ի վեր յուզուել, հնացել եւ պատմաբանական վճռով ի շարս վնասակար եւ անկարելի իրողութեանց դատուել է։ Այս ինդիրն է հայկական եւ յունական եկեղեցաց միութեան խնդիրը, զոր այսօր տղիւնութիւնը կամ լաւ եւս ասել թե՛ թեւամասութիւնը վերստին յուզուել երեւոյթներ կը ցուցնէ՝ երեւակայական ցնորքներէ յալիչապակուելով։» Քիչ մը ետքը կը յաւելու։ «Երբոր այն ամեն զբոսութիւնները, վէճերը եւ տաղնապիւրը

մեր աչքի առջեւ կը ներկայացնենք, զորս յունական եկեղեցեաց միութիւն քարոզող զաւակները յարուցել են Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ։ Երբոր այն ամեն վնասները կը պատկերացնենք զորս յորժեհ հասուցած են հայոց ազգին՝ իրենց երազած միութիւնը մերժուելուն պատճառաւ, կը սոսկանք, կը զարհուրինք եւ միանգամայն կատալուստեմք ասել, որ եթէ եկեղեցական պատմութեան մէջ քրիստոնէութեան նախատինքները դէպքեր կան, նոցա առաջինն կարէ համարուիլ յունաց կողմէն միութեան խնդրոյն առթիւ հայոց ազգին հասած դարաւոր վնասները։ Նոքա այնչափ ահաբեկ են եկեղեցական պատմութեան մէջ՝ որչափ հաւատաքննութեան (էնքիզիսիօնի) անտիքրիստոնէական դէպքերը։ Բայց միթէ քրիստոնէական անմիութեան առթիւ կատարուած են այս սոսկալի իրողութիւնները։ —Ո՛չ երբէք։ այլ ծիսական անմիակերպութեան, Միթէ քրիստոնէական միութիւն էր յունաց պահանջածը։ —Ո՛չ երբէք։ այլ ծիսական միակերպութիւն։ Մեր ասածներու ճշմարտութիւնը նոյն իսկ երկար դարերով յուզուած վէճերէն յայտնի է, ինչպէս են Սուրբ Աստուածը Խաչքուռ ասելը, անշուշտ անհաշիւ պատարագելը, Քրիստոսի բնութեան եւ ծննդեան օծնի կատարման խնդիրներն եւ այլ այսպիսի խնդիրներ, զորս յորժեհ կը ջանային իրենց հետ համակերպել, երբեմն հալածանքներով եւ երբեմն դադանի հերպապուրանքներով։»

Մնացեալը յաջորդ թուով։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ռուսիոյ առաջին եւ երկրորդ փոխառութեանց տոկոսաւոր եւ վիճակաւոր տոմսակներուն եւ վիճանայի տոկոսաւոր եւ անտոկոս մայր տոմսակներուն եւ Բոսմէաներուն բուն տէքսթիլօն է Ղալաթիա Քոմիսիօն խան թիւ 16 Մատէլլայի դեղարանին քով սեղանաւոր սինեօր ճորճի ձԱԼԵԹԹՈՒ գրասենեակը։

Այս գրասենեակը ծախուած տոմսակներն Ռուսիոյ 1866 Նաբիբին հինգ տոկոսով փոխառութեան տոմսակները ապրին երկու անգամ վիճակահանութիւն ունին, մէկը սեպտ. 1ին, եւ միւսը մարտ 1ին. եւ ամեն մէկ անգամուն 300 տոմսակ կայ վաստըկող։ առաջինը 200,000 քառպոն. երկրորդը 75 000. երրորդը 40,000. չորրորդը 25,000. երեք հաւը 10ական հաղար. տասը հաւը 8ական հաղար. ութ հաւը 5ական հաղար. քսանը 1 000ական եւ 260ը 500ական քառպոն։

Այս տոմսակները երեք կերպով չահաւոր են. նախ՝ հարիւրին 3 տոկոս ունին. երկրորդ՝ վիճակահանութեան մէջ վաստըկող թիւերուն ստակը հոս անմիջապէս կը վճարուի վերոյիշեալ գրասենեակէն. երրորդ՝ վաստըկող տոմսակը նորէն տիրովը կը տրուի եւ կրնայ դարձեալ վիճակահանութեամբ վաստըկիլ։

Առաւել մանրամասն տեղեկութիւն ուղղը կրնայ վերոյիշեալ սինեօր ձ. ձանէթ-թօնի ստանալ։

Վիճանայի Բոսմէաներուն գինն է 30 ղշ։

Խմբագիր-Տնօրեն
Կ. Ս. ԻԻՔԻՆԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼԻԱԳՐՈՑ
Կ. ՊՈԼԻՍ ԶԵՆԻԼԻ ԽԱՆ